ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՆԻՍՏԸ

● Ղարաբաղի Ռարցին նուիրուած նիստն մասնակի արձանագրութեան ներկայ հատուածէն, որ շրջը կը հանդիսանայ մեր այս շաբթին, կը պարզուի կարեւոր պարագայ մը. այլ հանրապետութեանց ներկայացուցիչներ հայերէ կը պնդանցէն փոխզիջումներ, առանց յստակացնելու սակայն զանոնք։ Մինչդեռ հայեր եւ Հայաստան զիջելու բան չունին իրենց տրամադրելիք։ Բեռն ամբողջապէս Ադրբեջանի ուսերուն է։ Ինչպէս կարելի է հասկնալ, Ադրբեջանի ներկայացուցիչներ Հայաստանի հետ ոչ մի բան չեն ուզեր բաժնել։ Ինչպէս կարելի է հասկնալ, Ադրբեջանի ներկայացուցիչներ Հայաստանի հետ ոչ մի բան չեն ուզեր բաժնել։

Մենք հասկանում ենք, թէ ինչքան շատ են մեր խնդիրները ներքին ու միջազգային կեանքում, ասաց ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութեան անդամ, Գ. Դ. Լէբեդեւի անուան ֆիզիկական ինստիտուտի տնօրէն Ն. Գ. Պասով։ Մենք հարցերի լուծման ուղիներ ենք գտնում միջազգային գործերում, անդամ յաջողուեց ամերիկացիների հետ համաձայնութեան գալ երկրագնդի վրայ կեանքի պահպանման բարդ հարցերի շուրջը։ Իսկ Լեռնային Ղարաբաղի իրադարձութիւնները չարունակում են մեզ անհանգստացնել արդէն մի քանի ամիս։

Հայաստանի եւ Ադրբեջանի գերագոյն սովետների նախագահութիւնների նախագահների այսօրուայ ելոյթներում, նը-կատեց ելոյթ ունեցողը, փոփոխում չենք։ Հանդարտ առաջարկեց ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութեան անունից յանձնաժողով ուղարկել Լեռնային Ղարաբաղ, որը կ'օգնէր հանդոյց հանգոյցի յետեւից քանդել եւ հնարաւորութիւնները գտնել կարգաւորելու իրադրութիւնը։ Երկու հանրապետութիւնները պէտք է միմեանց ընդառաջ գնան։

Ազգային տերիտորիալ հարցեր լուծելիս անդնդուելիի են բացայայտ թելադրանքը, կտրական եւ հակասամեամաղրական գործողութիւնները, ասաց ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութեան անդամ, Ուզբեկստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ռ. Ն. Նիշանովը։ Այժմ դլխաւոր խնդիրը ոչ թէ հանրապետութիւնների միջեւ ստեղծուած սահմանների վերանայումն է, այլ մեր ընդհանուր տանը կարգուկանոն հաստատելը։

Հանդարտ ոգեւորանք յայտնեց, որ Հ. Մ. Ռսկանեանի ելոյթում փաստօրէն հարցը դրուեց այնպէս, որ ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութիւնը պէտք է որոշում կայացնի այն ոգով, ինչ ոգով դա արել էր Հայկական ՍՍՀ Գերագոյն սովետը։ Այդ հանդոյցը քանդելու համար պէտք է դադարեցուն կտրական պահանջները, գործադուլները, միթինները՝ իրենց ծայրայեղական կոչերով։

Հայաստանում եւ ԼՂԻՄում օրինական դրսեւորումները իր ելոյթում ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի նախագահ ՍՍՀՄ Գերագոյն սովետի ներկայացուցիչ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումեանը։ Նա նշեց հասարակական կարգուկանոնը վերականգնելու համար վճռական պայքար մղելու անհրաժեշտութիւնը։

Վերլուծելով ստեղծուած իրավիճակի պատմական պատճառները, հեռատը պաշտպանեց ԼՂԻՄի այն ընակիչների պահանջը, որոնք հանդէս են գալիս Ադրբեջանի կազմից ինքնավար մարզի դուրս գալու եւ Հայկական ՍՍՀի կազմի մէջ այն մտցնելու օգտին։ Գիտնականը խիստ հեռու մի շարք մեղադրանքներ յայտնեց Ադրբեջանական ՍՍՀ նախկին վեկավարութեան հասցէին՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան նկատմամբ նրա վարած քաղաքականութեան համար։ Նա նաեւ արտայայտեց իր մտահոգութիւնը այն առթիւ, որ, իր կարծիքով, դեռեւս փոքրիշատէ վճռական քայլեր չեն իրականացուում ստեղծուած կացութեան լուրջ բարելաւման համար։

Մեր այսօրուայ որոշումից կախուած կը լինի այն, թէ մենք ինչ ժառանգութիւն կը թողնենք մեր թոռներին ու ծոռներին՝ եւս տասնամեակների աղդային թշնամանք, թէ արմատական զլացում, ասաց ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութեան անդամ, դրող Ռ. Հ. Համզատովը։

Ահա թէ ինչու, այսօր քննարկելով փակուղուց դուրս գալու ելքը, մենք իրաւունք չունենք սխալուելու։ Պէտք է ազնուորէն խոստովանել, որ նման սխալ արդէն թոյլ տուեցին Հայաստանի եւ Ադրբեջանի գերագոյն սովետների նախագահները։ Հարցի լուծման նրանց առաջարկած տարբերակները, ասաց հեռատը, ես, որպէս լեռնցի, կը համեմատէի լեռներում սկսեալ մեծ քարանկման հետ։ Ուրեմն ինչպէ՞ս վարուել։ Իմ առաջարկութիւնը պարզ է. առայժմ ամէն ինչ թողնել այնտեղ, ինչպէս կայ, որը լիովին համապատասխանում է սահմանադրութեանը։ Միաժամանակ հարկ կը լինէր մինչեւ սկզբունքային որոշումներ ընդունելը քննարկել Լեռնային Ղարաբաղը մութիւնական մարմինների ժամանակաւոր կառավարմանը յանձնելու հնարաւորութիւնը։

Զայնը տրուում է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա.-Ի. Ա. Վեզիրովին։ Ցաւալի ու զաղջ է, ասաց նա, որ 19րդ համամիութենական համաժողովից յետոյ ՍՍՀՄ Գերագոյն սովետի նախագահութեան առաջին իսկ նիստում քննարկուում է մի հարց, որի բուն առաջադրումը էական վնաս հասցրեց հարեւան ժողովուրդների բարեկամութեանը։ Պէտք է անյետաձգելիօրէն միջոցներ ձեռնարկել վերականգնելու հասարակական կարգը, օրինականութիւնը, դադարեցնելու անհարգել գործադուլը Սումգայիթում։

Դեմոկրատական ու հրապարակայնութեան լոզունգներով քողարկուող արշաւը՝ բանախօսն անուանեց հակակրաւական։ Բնութագրելով ԼՂԻՄի իրավիճակը, նա նշեց, որ ինքնավար մարզի կուսակցական եւ սովետական մարմինները իշխանութիւն չունեն ինքնավար մարզում, իսկ մարդկանց կառավարում են նրանք, ովքեր իրենք են բացասական երեւոյթներ ստեղծում։

Ընկեր Ցարութիւնեանի հետ մէկտեղ, ասաց հեռատը, մենք չէինք երկու հանրապետութիւնների չէիններում։ Մարդիկ այնտեղ ուղղակի ասում էին. թոյլ մի տուէք խոսանալու մեր ժողովուրդների դարաւոր բարեկամութիւնը։

Մ. Ս. Կորպաչով. Դուք ասացիք ընկեր Ցարութիւնեանի հետ ձեր հանդիպումների մասին։ Իսկ ահա ընկեր Նիշանովն ինձ պատմել է, 20 թէ 25 ապրիլեանի դեկավարները հանդիպումներ չեն ունեցել Ցանիկեանի դեկավարների հետ։ Իսկ դրանք շատ մեծ հանրապետութիւններ են, նրանց ճակատագիրը միահիւսուած են, Ամարդանդում մեծ թուով տաճիկներ են ապրում։ Իսկ հանրապետութեան դեկավարները քաջարդ դար չեն հանդիպել միմեանց։ Ահա, թէ ինչպէս է լինում։

Երկու հարեւան՝ հայ եւ ադրբէջանական ժողովուրդների յարաբերութիւնները բարդացած իրադրութեան մասին տարբերութիւնները բարդացած իրադրութեան մասին տարբերութիւնները բարդացած իրադրութեան մասին տար